




ԶԱՐԵԷ ԵՊՍ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Եհովայի Վկաներ առիթ չեն փախցըներ յեղյեղելու և շեշտելու համար, թէ չկայ Երրորդութիւն, այլ միակ Աստուած մը՝ Եհովան: Աստուած Երրորդութիւն չէ՛,—կ'ըսեն,—այլ մէկ: Ամենակալ Աստուծոյ Որդին է Յիսուս Քրիստոս, բայց Աստուած չէ՛: Երրորդութեան «անտրամաբանական» վարդապետութիւնը Սատանային կողմէ հնարուած է՝ ճշմարիտ Աստուծոյ ճանաչողութիւնը խափանելու համար, մինչդէռ «Երրորդութիւն» բացատրութիւնը բնաւ չի յիշուիր Աստուածաշունչին մէջ¹:

Ամենասուրբ Երրորդութիւնը մերժելու իրենց մոլուցքին մէջ, Եհովայի Վկաներ կը փորձեն ամէն ալէ վկայութիւն ժողվել, ըսելու համար՝ թէ Երրորդութեան վարդապետութիւնը ո'չ միայն չ'ուսուցուիր Աստուածաշունչին մէջ, Քրիստոսի կամ Պօղոս առաքեալի կողմէ, այլ նաեւ ծանօթ չէ առաջին յրիստոնէականերուն կամ նոյնիսկ առաջին դարերուն, և միայն Քրիստոսէ շուրջ 300 տարիներ ետք կ'ըսկսի երեսան գալ՝ հեթանոսական կրօններու ազդեցութեամբ:

Սակայն Սուրբ Երրորդութեան յայտնութիւնը ո'չ Սատանայէն է և ոչ ալ հեթանոսական կրօններէն, ինչպէս մեզի հաւատացնել կ'ուզեն Եհովայի Վկաներ: Անիկա նոյնինքն Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը և ուսուցումն է մեզի, որուն կ'արձագանգեն Նոր Կտակարանին գիրքերը եւս: Բայց նոյնիսկ Հին Կտակարանին մէջ անոր հետքերը կարելի է տեսնել:

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԾՓՈԹԵՑՈՒՑԻՉ²

Քրիստոնէական եկեղեցիներու հաւատքի դասանութեան հիմնաքարը կազմող Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնը նսեմացնելու և ուրանալու իրենց ճիգին մէջ, Եհովայի Վկաներ կ'ըսեն՝ թէ «Շատ մը անկեղծ

¹ Տե՛ս Դուք կրնաք Յափտեան Ապրիլ Երկնային Դրախտի մը Մէջ, էջ 39—40:

հաւատացեալներ զայն շփոթեցուցիչ կը գտնեն, և հակառակ՝ բնական տրամաբանութեան, ինչպէս նաեւ ամէն բանի՝ որ փորձառութիւնը իրենց սորվեցուցած է»²: Յետոյ այս «շփոթեցուցիչ» բառին վրայ խաղալով, և չարաշահութեամբ իրենց դատին ի նպաստ ենթադրել տալով կարգ մը աստուածաբաններու անկեղծ արտայայտութիւնը՝ թէ Սուրբ Երրորդութեան մէջ միակ Աստուած մը ճանչնալը «խորին խորհուրդ մըն է, որուն հասկացողութիւնը ամբողջութեամբ խոյս կու տայ մեզմէ», կամ՝ թէ անիկա «անգննելի խորհուրդ մըն է»³, հետեւեալ եզրակացութիւնը կը հանեն. «Աստուած կրնա՞յ պատասխանատու ըլլալ իր մասին վարդապետութեան մը որ ա՛յնքան շփոթեցուցիչ է՝ որ նոյնիսկ Եբրայեցի, Յուն և Լատին ուսումնականներ չեն կրնար իրապէս բացատրել զայն: Աւելին, մարդիկ պե՞տք է աստուածաբաններ ըլլան «ճանչնալու համար միակ ճշմարիտ Աստուածը և Յիսուս Քրիստոսը որ ան դրկած է» (Յովհաննէս 17.3)»⁴:

Ծանօթ իրողութիւն է, որ Ս. Երրորդութեան վարդապետութիւնը այս և նման աղանդաւորներու կողմէ կը մերժուի, ինչպէս անցեալին մերժուած է Արիոսականներուն, Սաբելեաններուն և բազմաթիւ ուրիշներու կողմէ, ո՛չ թէ «Աստուածաշնչական» չըլլալուն համար, այլ՝ դժուար բացատրելի և դժուար հասկնալի կամ ըմբռնելի ըլլալուն համար:

Բայց, ինչ որ դիրին հասկնալի չէ կամ մարդկային մտքի հասողութենէն վեր կը մնայ, կամ մարդկային փորձառութեան մէջ չ'իյնար, կամ նոյնիսկ իրենց գործածած բացատրութեամբ՝ ինչ որ «շփոթեցուցիչ» է, չի՞ կրնար ճշմարիտ ըլլալ և Աստուծմէ տրուած ճշմարիտ յայտնութիւն ըլլալ: Առնուազն զարմանալի չէ՞ այս յայտարարութիւնը, և արդեօք պարզապէս Եհովայի Վկաներու չարամտութիւնը քողարկելու չի՞ ծառայեր: Որովհետեւ ամէն մարդ գիտէ, որ հաւատքի վերաբերող գոնէ կարգ մը իրողութիւններ ա՛յնքան ալ դիրին բացատրելի չեն. մարդկային սովորական տրամաբանութեան հակառակ կրնան ըլլալ և կրնան մեր փորձառութիւններէն ամբողջութեամբ խուսափիլ. կրնան նոյնիսկ շփոթեցուցիչ ըլլալ, բայց ատիկա երբեք ալ պատճառ մը չէ զանոնք ուրանալու կամ մերժելու:

Օրինակներով խօսինք:

Երբ Յիսուս առիթով մը յայտարարեց, թէ «երկինքէն իջած հացը» այն մանանան չէ՛ր որ Իսրայելացի ժողովուրդին հայրերը Եգիպտոսէն ելքի ժամանակներուն անապատին մէջ կերան, այլ՝ երկինքէն իջած ճշմարիտ Կեանքի Հացը ի՛նք՝ Քրիստոս է, և ով որ իր մարմինէն չ'ուտեր և իր արիւնէն չի խմեր՝ չի՛ կրնար յաիտենական կեանք ունենալ (Յհ. 6.31-59), Հրեաներ և նոյնիսկ Յիսուսի աշակերտներէն շատ շատեր չհասկցան և շփոթեցան, «գայթակղեցան» և դադրեցան իրեն հետեւելէ (Յհ. 6.61-67): Արդ, ի՞նչպէս կ'ըլլայ որ Յիսուս այսպիսի «շփոթեցուցիչ» վարդապետութեան մը «պատասխանատուն» եղաւ: Վարդապետութիւն մը՝ որ մինչեւ այժմ ալ չէ դադրած դժուար հասկնալի, շփոթեցուցիչ և ոմանց համար նոյնիսկ գայթակղեցուցիչ ըլլալէ:

² Տե՛ս Doit-on croire à la Trinité?, էջ 4 (թարգմանութիւնը մերն է):

³ Տե՛ս Անդ, էջ 4: Առաջինը կարտինալ Շոն Ծ. Քաննըրի և երկրորդը Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի արտայայտութիւններն են:

⁴ Անդ, էջ 5:

Աւելի ետ երթանք, մինչեւ Յիսուսի ծնունդը: Այդ ծնունդը, ինչպէս Եհովայի Վկաներ իրենք ալ կ'ընդունին⁵, կուսական է, այսինքն՝ Յիսուս Քրիստոս ծնաւ կոյս մօրմէ մը՝ Մարիամէն, առանց այր մարդու սերմ ընդունելու, Ս. Հոգիին զօրութեամբ միայն (տե՛ս Մտ. 1.18-20: Ղկ. 1.34-35: Հմմտ. Ես. 7.14): Հարց տանք հիմա: Միթէ կուսական այս ծնունդը մարդկային «բնական տրամաբանութեան հակառակ» չէ՞: Ո՛վ կրնայ մարդկային փորձառութեան վրայ կոթնելով փորձել հասկնալ այդպիսի գերբնական ծնունդ մը: Եւ բնական միտքի սահմաններէն դուրս գալ չուզող ոեւէ անձի համար «շփոթեցուցիչ» չէ՞ կուսական ծնունդի մասին խօսիլը: Փաստօրէ՞ջ շատեր դժուարութիւն ունեցեր են զայն պատկերացնելու և հասկնալու, և այսօր ալ քիչ չեն անոնք՝ որոնք նոյն դժուարութիւնը կ'ըզգան, և այդ դժուարութիւնը շա՛տ հասկնալի է «բնական տրամաբանութեան» համար: Բայց դժուարութեան պատճառով (կամ պատրուակով) կարելի՞ է մերժել հաւատքի այս ճշմարտութիւնը, որ, Եհովայի Վկաներ իրենք ալ կ'ընդունին, հակառակ անոր որ կուսական ծնունդը եւս «անգնելի խորհուրդ մըն է», իսկական «խորին խորհուրդ մըն է, որուն հասկացողութիւնը ամբողջութեամբ խոյս կու տայ մեզմէ»: Եւ դարձեալ հարց կու տանք. ոեւէ մէկը աստուածաբա՛ն պէտք է ըլլայ որ ճանչնայ և ընդունի, կամ աստուածաբա՛ն կ'ըլլայ երբ կը ճանչնայ և կ'ընդունի Քրիստոսի կուսական ծնունդը: Ըլլալը, ինչպէս Երրորդութեան պարագային կը փորձեն «տրամաբանել» Եհովայի Վկաներ:

Կը մնայ եզրակացնել, թէ յայտնապէս խախտու «տրամաբանութիւն» մըն է Եհովայի Վկաներուն կողմէ գործածուածը և պարզապէս ցոյց կու տայ՝ որ Եհովայի Վկաներ Աստուածաշնչական ճշմարտութիւններուն իրենց մօտեցման և բացատրութեան մէջ պարկեշտ չեն, ո՛չ իրենք իրենց հանդէպ և ո՛չ ալ խեղճ ու պարզամիտ այն հաւատացեալներուն, որոնք իրենց ետեւէն կը փորձեն քաշել:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Յաջորդ իբրեւ քայլ՝ Եհովայի Վկաներ աջէն ու ձախէն աստուածաբանական գործերէ կամ հանրագիտարաններէ մէջբերումներ կը կատարեն, ըսելու համար թէ Հին և Նոր Կտակարանները Երրորդութեան վարդապետութիւնը չեն ուսուցաներ բնաւ, ո՛չ յայտնապէս և ո՛չ ալ ծածկապէս, այսինքն՝ նախապատկերացումներով կամ թելադրական ակնարկներով և կամ «քողարկուած նշաններով»⁶:

Նախ խօսինք Հին Կտակարանի մասին:

Թէ Հին Կտակարանին մէջ Սուրբ Երրորդութեան մասին բազմաթիւ են ակնարկները, ծածկաբանութիւնները, «քողարկուած նշանները», ատիկա կարելի է ցոյց տալ անմիջապէս: Բայց նախքան այդ՝ սկզբունքային կէտ մը կայ, որուն մասին պէտք է խօսիլ:

⁵ Տե՛ս, օրինակ, իրենց կողմէ հրատարակուած Աստուածաշնչական Բառագիրքը, A I O T O B I B L E U N D E R S T A N D I N G, «Կոյս (Virgin)», բառին տակ, էջ 1638ա, հմմտ. «Յիսուս Քրիստոս, իր ծնունդը երկրի վրայ (Jesus Christ, his birth on earth)» էջ 920բ:

⁶ Տե՛ս Doit-on croire à la Trinité?, էջ 6.

թիւնը կը սահմանափակուէր ծիսական և արարողական պահանջքներով: Սատիճանաբար էր միայն, որ Աստուծոյ յայտնութեան մէջ պիտի տրուէին աննիւթական, հոգեկան հասկացողութիւնները, և դրուէին բարոյական պահանջքները: Ահա թէ ինչու՝ Պօղոս առաքեալ ամբողջ Հին Կտակարանը կը կոչէ «մեր դաստիարակը», որ մեզ Յիսուս Քրիստոսի և անոր բերած ամբողջական յայտնութեան կ'առաջնորդէ (Գղ. 3.24): Շատ մը ճշմարտութիւններ մարդիկ պիտի չկարենային հասկնալ և ընդունիլ անցեալին, եթէ նոյնիսկ իրենց յայտնուէին անոնք: Այդ պատճառով ալ Աստուած շատ մը բաներ Հին Կտակարանին մէջ միայն մասնակիօրէն և թանձր պատկերացումներով յայտնեց, աւելի ուշ զանոնք իրենց բուն հոգեղէն իրականութեամբ և ամբողջականօրէն յայտնելու համար: Այսպէս, օրինակ, Պօղոս առաքեալ մեզի ցոյց կու տայ, թէ Հին Կտակարանին մէջ Իսրայէլի ժողովուրդը «քօղարկուած» նախապատկերացումն էր Քրիստոսի Եկեղեցիին, թէ անոր տրուած Վկայութեան Խորանը «քօղարկուած» նախապատկերացումն էր երկնաւոր բուն Սրբարանին, որ մեր Քահանայապետը՝ Քրիստոս պիտի մտնէր միանգամընդմիջտ, ելլն: Հին Կտակարանին մէջ այդ նախապատկերացումները Պօղոս առաքեալ «շուք»ը կը կոչէ այն բուն իրականութեանց՝ որոնք Նոր Կտակարանին մէջ պիտի գտնէին իրենց «ճշմարտութիւն»ը:

Նոյնն է պարագան Աստուծոյ յայտնութեան՝ ինքն իր մասին, իր բնութեան, իր ինչութեան և իր անձնատրութեան մասին: Աստուած Հին Կտակարանին մէջ չուզեց և չէր կրնար արտայայտուիլ այնպէս՝ ինչպէս ուզեց արտայայտուիլ Նոր Կտակարանին մէջ: Եթէ ամէն ինչ յայտնուած ըլլար, Քրիստոս ի՞նչպէս նոր յայտնութիւններ բերաւ Աստուծոյ մասին, որոնց կարգին է «Երրորդութիւնը»:

ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Աստուծոյ Երրորդութիւն ըլլալը միայն ճշմարային ձեւով կը գտնենք Հին Կտակարանին մէջ, մինչ Նոր Կտակարանին մէջ յատկօրէն կը վկայուի անոր մասին, ճիշդ ինչպէս Աստուծոյ մասին շատ մը ուրիշ ճշմարտութիւններ Հին Կտակարանը չի տար մեզի, բայց Նոր Կտակարանով անոնք կը բացայայտուին կամ կը յայտնուին մեզի: Այսպէս, օրինակ, Հին Կտակարանը երբե՛ք չ'ըսէր թէ «ՀՈԳԻ Է ԱՍՏՈՒԱԾ, և իրեն երկրպագողներն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն» (Յն. 4.24). ընդհակառակը, ինչպէս կ'անխեցինք ըսել՝ Հին Կտակարանին մէջ Աստուած լաճախ մարդակերպ և թանձրական պատկերացումներով կը ներկայացուի, և իրեն ընծայուած պաշտամունքն ալ զուտ արտաքին, ծիսական-արարողական հասկացողութեամբ պայմանաւորուած կը ներկայանայ, զոհերով ու մարմնական լուացումներով յատկանշուած (տե՛ս Եբր. 9.1-14). բայց ատիկա արգե՛լք է, որ մենք Աստուծոյ ճիշդ ըմբռնումը և հասկացողութիւնը քաղենք Նոր Կտակարանէն, որ Հինին բերած մասնակի յայտնութիւնը կը լրացուի Քրիստոսի կողմէ (տե՛ս Մտ. 5.17): Հետեւաբար, Աստուծոյ բարձրակ միակութիւնը եւս դաստիարակչական մօտեցումով կատարուած անհրաժեշտ յայտնութիւն մըն էր, Հին Կտակարանին մէջ:

Միս կողմէ, սակայն, Հին Կտակարանը բազմաթիւ կերպերով կ'ակնարկէ Աստուծոյ երեք անձ կամ «երրորդութիւն» ըլլալուն, և այդ ճշմարտութիւնը կը նախապատկերացնէ ու կը տպաւորէ զանազան ձեւերով, «քողարկուած նշաններ»ու միջոցաւ զօրեղապէս թելադրելով անոր պատկերը կամ հասկացողութիւնը: Այսպէս, օրինակ.

1.— Աստուածաշունչի առաջին իսկ էջին վրայ, Ստեղծագործութեան պահուն, ինչպէս Ծննդոց գիրքը կը նկարագրէ զայն, Երրորդութեան երեք անձերը միասին կը գտնենք: Արդարեւ, Հօր Աստուծոյ հետ ներկայ են թէ՛ Սուրբ Հոգին (Ծն. 1.2) և թէ՛ Որդին, որ կը ներկայանայ իբրեւ Աստուծոյ «ԲԱՆ»ը, խօսքը կամ հրամանը (տե՛ս Ծն. 1.6-30: Հմմտ. Սղ. 33.6 և 9 ելն), և, ինչպէս Աստուածաշունչի հին ու նոր բոլոր լուրջ մեկնիչները կը ճանշնան ու կ'ընդունին, ստեղծագործութեան դրուագին մէջ և այնուհետեւ Աստուծոյ կողմէ յոգնակիով յիշուած բացատրութիւնները, ինչպէս օրինակ՝ **«ՄԵՐ պատկերին ու Մեր նմանութեանը պէս մարդ ԸՆԵՆՔ»** ելն (Ծն. 1.26: Տե՛ս նաեւ Ծն. 3.22, 11.7), առաջին վկայութիւնն են Աստուծոյ երեւակ անձնաւորութիւններուն:

2.— Հին Կտակարանին մէջ բազմաթիւ անգամներ բացայայտ կերպով կը խոսուի Ա. Հոգիին մասին, առանձին կամ Հօրը հետ միասին: Անոր ներկայութիւնը ա՛յնքան շեշտուած է, որ շատ վկայակոչումներ ընելու հարկ չենք տեսներ և կը բաւարարուինք յղումներով: Կարդացէ՛ք նշուած համարները, և պիտի տեսնէք թէ այդ յիշատակումները կը խօսին ո՛չ թէ միտքէ և գիտակցութենէ զուրկ «ոյժ»ի մը մասին, որ ինքնութիւն չունի, այլ ընդհակառակը, կը խօսին բանական և ուստի գիտակից էակի մը մասին, որ իր ինքնութիւնը ունեցող կատարեալ անձնաւորութիւն մըն է, մէկը Ա. Երրորդութեան երեք անձերէն, ինչպէս այդ մասին պիտի անդրադառնանք նաեւ Ա. Հոգիին մասին առանձին խօսած ատեն:

Օրինակ, Եսայի 48.16-ին մէջ մարգարէն կ'ըսէ. **«Հիմա զիս Տէր Եհովա և անոր Հոգին դրկեց»:** Ո՛վ է այս Հոգին, որ Հօր Աստուծոյ հետ կը գործէ և անոր հետ միասին ԿԸ ՂՐԿԷ մարգարէն՝ իր պատգամները տալու իր ժողովուրդին: Նոյնպէս կը տեսնենք թէ ի՛նչպէս, ամբողջ Հին Կտակարանին մէջ, «Հոգին» է, «Աստուծոյ Հոգին», կամ «Տիրոջ Հոգին», կամ «Սուրբ Հոգին», որ Աստուծոյ ընտրեալներուն մէջ կը բնակի և զանոնք կը ներշնչէ (հմմտ. Ծն. 41.38: Ելք 31.3: Թւ. 11.17, 27.18 ելն), զանոնք իմաստուն կը դարձնէ ու կ'առաջնորդէ (հմմտ. Թւ. 11.17: Նէ. 9.20: Սղ. 143.10 ելն), զանոնք խօսելու և մարգարէական պատգամներ տալու կը մղէ (հմմտ. Թւ. 11.25-29, 24.2: Ա.Թգ. 10.6-10, 19.23.24: Բ.Թգ. 23.2: Ա.Մն. 28.12: Նէ. 9.30: 3վլ. 2.28-29: Զք. 7.12 ելն), արարածները կամ մարդիկը կը վերանորոգէ՝ (հմմտ. Յոր. 33.4: Սղ. 33.6, 104.30 ելն), զօրութեամբ ու շնորհքներով կը լեցնէ զանոնք (հմմտ. Ես. 11.2: Մք. 3.8: Զք. 4.6, 12.10 ելն), կը մխիթարէ ու կը հանգստացնէ զանոնք (հմմտ. Ես. 63.14 ելն), բայց կրնայ դառնանալ մարդոց չար և անզիղջ վարմունքէն ու գործերէն, զգուիլ անոնցմէ և լքել զանոնք (հմմտ. Սղ. 51.11, 106.33: Ես. 63.10: Եր. 6.8, 14.19 ելն):

3.— Որդիին մասին Հին Կտակարանին մէջ բացայայտ կերպով չի խօսուիր, բայց ակնարկութիւններ և «քողարկուած նշաններ»ու տակ անոր ներկայութիւնը կը տեսնենք անպայմանօրէն, և Քրիստոս ինք ու Նոր Կտակարանը ատոր առաջին բանալիները կու տան մեզի:

Ուղղակի ակնարկ՝ հազիւ թէ կը գտնենք, ինչպէս օրինակ՝ Առակաց գիրքին մէջ, ուր իմաստունը կը խոստովանի թէ «Ամենասուրբին [=Աստուծոյ] գիտութիւնը» չունի, և կը շարունակէ. «Երկինք ո՞վ էլաւ ու իջաւ, հովը իր ձեռքերուն մէջ ո՞վ ժողվեց, ջուրերը իր հանդերձին մէջ ո՞վ ամփոփեց, երկրի բոլոր ծալքերը ո՞վ հաստատեց. անոր անունը ի՞նչ է, և ինչպէ՞ս կը կոչուի» (Առ. 20.4): Սաղ-ԱՆՈՐ ՈՐԴԻՈՅՆ ԱՆՈՒՆԸ Ի՞ՆՉ է. եթէ գիտես՝ ըսէ՛» (Առ. 20.4): Սաղ-մոսաց գիրքը եւս կը յիշէ Որդին և կը յայտնէ թէ անիկա «Հօրմէն ծնած» է (տե՛ս Սղ. 2.7: Հմմտ. Գրծ. 13.33: Եբր. 1.5), սկիզբէն կը յայտարարէ. «Երանի՛ այն ամենուն, որոնք անոր կը յուսան» (Սղ. 2.12: Հմմտ. Հռ. 9.33, 10.11: Ա. Պտ 2.6), ճիշդ ինչպէս Հօր Աստուծոյ համար նոյն Սաղ-մոսագիրը պիտի ըսէր. «Երանի՛ այն մարդուն որ անոր կը յուսայ» (Սղ. 94.8: Հմմտ. Սղ. 84.12: Առ. 16.20: Ես. 30.18: Եր. 17.7 ելն): Այդպիսի ակնարկներու կարգին կարելի է համարել նաեւ Եսայի 7.14 և 9.6 համարները, կամ Ովսէէ 11.1ը (հմմտ. Մտ. 2.15):

Գալով անուղղակի ակնարկներուն կամ սքողեալ, «քողարկուած» ակնարկներուն, դժուար է զանոնք բոլորը մատնանշել, և զանոնք «տեսնել»ը կապուած է յատուկ մեկնութեան մը, որ Հին Կտակարանի յատուկ բուն հոգեւոր իմաստն է, և որուն բանալին Քրիստոս և Նոր Կտակարանը կուտան մեզի: Այսպէս, օրինակ, Ա. Կորնթացոց 10րդ գլխուն սկիզբը, Պօղոս առաքեալ Եբրայեցի ժողովուրդին Եգիպտոսէ ելքին ատեն Կարմիր ծովէն անցնելու և ամպի սիւնով առաջնորդուելու փորձառութեան, ինչպէս նաեւ անապատին մէջ Աստուծմէ տրուած հացէն՝ մանանայէն ուտելու և Ռափիդիմի մէջ Աստուծոյ կողմէ ժայռէն բղխած ջուրէն խմելու հոգեւոր փորձառութեան մասին խօսելով՝ կ'ըսէ. «**2**եմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ մեր հաշքերը ամէնն ալ ամպին տակ էին, և ամէնն ալ ծովէն անցան, և ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ, և ամէնն ալ նոյն հոգեւոր կերակուրը կերան, և ամէնն ալ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին, որովհետեւ կը խմէին այն հոգեւոր վէմէն որ անոնց հետ կ'երթար. ԵՒ ԱՅՆ ՎԷՄԸ ՔՐԻՍՏՈՍ ԷՐ» (Ա. Կր. 10.1-4: Հմմտ. Ելք 13.21, 14.22, 16.15, 17.6: Հմմտ. նաեւ Յն. 4.10-14, 6.31-35 և 51-52):

Եթէ առաքեալը այս յայտնութիւնը չըներ՝ թերեւս մեզի համար դժուար ըլլար յիշուած դրուագներուն մէջ Քրիստոսի ներկայութիւնը ճանչնալ կամ ընդունիլ: Բայց անգամ մը այս բանալին ունենալէ և հոգեւոր սկզբունքը ճանչնալէ ետք՝ դժուար չէ Որդիին ներկայութիւնը տեսնել ու ճանչնալ շատ մը ուրիշ տեղեր ալ: Վերեւ ըսինք, որ Ծննդոց գիրքին մէջ ստեղծագործութեան դրուագը կարդացողը Որդիին անունին չի հանդիպիր, բայց անհա անգամ մը գիտնալէ ետք թէ Որդին ինք Աստուծոյ «ԲԱՆ»ն է, Աստուծոյ Խօսքը և Իմաստութիւնն է (Յն. 1.1-2 և 14), դժուար չէ տեսնել իր ներկայութիւնը՝ ստեղծագործութեան մէջ, ուր ամէն ինչ Աստուծոյ խօսքովը գոյացաւ, ինչպէս Նոր Կտակարանը կու գայ բացայայտ յայտնութեամբ մեզի ըսելու, թէ ամէն ինչ Բանին՝ Որդիին միջոցաւ գոյացաւ, թէ՛ տիեզերքը, թէ՛ կեանքը, թէ՛ մարդը (Յն. 1.3-4 և 10: Եփ. 3.9: Կղ. 1.16: Եբր. 1.2, 11.3: Յլտ. 4.11: Ա.Յն. 5.11):

Օրինակները կարելի էր բազմացնել ու բազմապատկել, բայց այս հանգրուանին ատիկա ռեւէ կերպով մեզի օգտակար պիտի չըլլար: Ուստի կը սպասենք՝ Որդիին աստուածութեան անդրադարձած ատեն այդ մասին խօսելու: Այստեղ մեզի համար բաւարար է ըսել, կրկին անգամ, թէ Հին Կտակարանը ըլլա՛յ առանձնաբար, ըլլա՛յ միասնաբար՝ կը խօսի Հօրը, Որ-

դիին և Ա. Հոգիին մասին, թեպետ երբեք Երրորդության մասին չի խօսիր՝ իբրեւ վարդապետութիւն, վերեւ նշում Կառնաւորով: Իսկ եթէ երեք անձերուն մասին կը խօսի, ինչպէս տեսանք թէ կը խօսի, իրաւունք կ'ունենա՞նք ըսելու՝ թէ այդ վարդապետութիւնը հոն չկայ նոյնիսկ «ծածկապէս», «քողարկում» կերպով: Մեզմէ անկախ իսկ, այսինքն՝ մենք ուզենք թէ չուզենք, ընդունելու պատրաստ ըլլանք թէ չըլլանք, անիկա կա՛յ Հին Կտակարանին մէջ, ինչպէս Նոր Կտակարանը առաւել չափով կը յայտնէ:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԿՈՒՍՈՒՑԱՆԷ՞

Եհովայի Վկաներ կը փութան անելոցնել, և դարձեալ աջէն ու ձախէ՞ փրցում Կիսկատար վկայակոչումներ բերել իբրեւ «փաստ», թէ՛ Նոր Կտակարանը եւս չ'ուսուցանէր Ա. Երրորդութիւնը:

Իսկ ի՞նչ կ'ըսէ Նոր Կտակարանը. կ'ուսուցանէ՞ թէ ոչ:

Եհովայի Վկաներ գիտեն, թէ Նոր Կտակարանին մէջ Ա. Երրորդութեան մասին կան քանի մը կարեւոր վկայութիւններ, կամ ապացոյցներ, որոնք կարելի չէ՛ շրջանցել: Այնպէս կը ձեւացնեն թէ բնութեան կ'առնեն այդ բնագիրները: Բայց որպէսզի ընթերցողը անոնց վրայ կանգ չառնէ՝ սկիզբէն իսկ կը փութան ըսել. «Երբ այս բնագիրները կը կարդանք, սակայն, պետք է յիշենք՝ որ ո՛չ Աստուածաշունչը, ո՛չ ալ Պատմութիւնը չեն վկայեր Երրորդութեան օգտին»⁷: Զարմանալի չէ՞ ընթերցողներուն միտքը կաշկանդելու այս փութկոտութիւնը. ինչո՞ւ մտահոգուիլ, որ բերուելիք վկայութիւնները կարդալով՝ յանկարծ ընթերցողը կրնայ չյիշել՝ որ ո՛չ Աստուածաշունչը, ո՛չ ալ Պատմութիւնը չեն վկայեր Երրորդութեան օգտին». ինչո՞ւ չձգել որ բնագիրը ըսէ իր ըսելիքը և կարդացողը նախ ի՛նքն դատէ թէ կարդացածը ի՛նչ կ'ըսէ կամ կը թելադրէ իրեն:

Առաջին կամ գլխաւորագոյն երեք ապացոյցները, որ Եհովայի Վկաներ շատ անցողակի կերպով կը յիշեն, հետեւեալներն են.—

1.— «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը և Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ. ամէն» (Բ. Կր. 13.13):

2.— «Պարգեւները զանազան են, բայց նոյն ՀՈԳԻՆ է [տուողը]: Նաեւ պաշտօնները զանազան են, բայց նոյն ՏէՐՆ է (զանոնք բաշխողը]: Նոյնպէս ալ ներգործութիւնները զանազան են, բայց նոյն ԱՍՏՈՒԱԾՆ է որ կը ներգործէ» (12.4-6):

3.— «Ուրեմն զացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, ՄԿՐՏԵՅԷՔ ԶԱՆՈՒՔ՝ ՅՈՒՔ՝ ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ» (Մտթ. 28.19): Զանոնք մէջբերելէ անմիջապէս ետք կը հարցընեն.— «Այս համարներուն մէջ կը կարդա՞նք թէ Աստուած, Քրիստոս և սուրբ հոգին մէկ երեակ Աստուածութիւն կը կազմեն, թէ երեքն ալ հաւասար են բնութեամբ, իշխանութեամբ և յաւիտենականութեամբ: Ոչ, պարզապէս երեք անձեր իշխանութեամբ և յաւիտենականութեամբ թէ անոնք մէկի մէջ (միացած) երեք իրարու ետեւէ յիշելը չ'ենթադրէր թէ անոնք մէկի մէջ (միացած) երեք բնագիրներէն են»⁸: Ապա, պարզապէս քանի մը տողով վերեւ յիշում երեք բնագիրներէն առաջինին ու վերջինին անդրադառնալէ և զանոնք Երրորդութիւնը ճանչնալու «անբաւարար» հոշակելէ ետք՝ կը սահին կ'անցնին Ա. Կորնթացոց

⁷ Տե՛ս Doit-on croire à la Trinité?, էջ 93 (թրգմ. և ընդգծում մեր կողմէ):

⁸ Տե՛ս Անդ, էջ 23 (թրգմ. մերը):

12.4-6ին վրայէն, և նիւթը փոխելով կը սկսին Հօր Աստուծոյ և Քրիստոսի հաստատութեան հարցը ծեծել: Ահա թէ ի՛նչպէս կը քննեն և իրենց քմահաճ հաստատումները կ'ընեն Եհովայի Վկաներ:

Բայց մենք համառօտակի խօսինք իւրաքանչիւր բնագրի մասին:

1.— Պօղոս առաքեալ Կորնթացիներուն գրած իր երկրորդ նամակը կը փակէ օրհնութեան աչքառու բանաձեւով մը. «**Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը և Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր ամենուն հետ ըլլայ. ամէն**» (Բ. Կր. 13.13): Գործածութիւններէն գիտենք, և արդէն կը տեսնենք, թէ «Աստուած» կոչումով, որուն առընթեր կը յիշատակուին Որդին և Սուրբ Հոգին, Հայրն է որ կ'իմացուի: Արդ, հարցը մեզի համար սա է.— այստեղ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին կողք-կողքի յիշատակելը «պարզապէս երեք անձեր իրարու ետեւէ յիշե՛լ» մըն է, թէ վկայութիւն մըն է՝ մէկ Աստուածութեան մէջ միացեալ երեք անձերու: Ծիշդ է, որ այստեղ բնագիրը ինքնին մեզի չի կրնար օգնել՝ հարցին պատասխան մը տալու համար. բայց ո՞վ չի գիտեր, թէ ոեւէ օրհնութիւն միայն Աստուծոյ անունով կը տրուի, և ո՛չ արարածներու կամ մարգարէներու անունով: Մանաւանդ Հին Կտակարանով դաստիարակուած առաքեալը շա՛տ լաւ գիտէ այդ մէկը: Իսկ եթէ Պօղոս իր օրհնութիւնը կու տայ երեք անձերուն՝ Հօրը, Որդիին և Սուրբ Հոգիին անունով, ատիկա ցոյց կու տայ թէ գիտակցաբար է որ կը գործածէ այդ բանաձեւը, որովհետեւ Աստուած ինք Երրորդութիւնն է, և Հօրը, Որդիին և Սուրբ Հոգիին երեք անձերը մէկ և անբաժանելի միութեան մէջ նոյն Ամենակալ Աստուածն է որ կը կազմեն:

2.— Ս. Երրորդութեան մասին թէպէտ կողմնակի բայց բացայայտ ու զօրեղ վկայութիւն մըն է մեզի Պօղոս առաքեալի մեզի ընծայածը՝ Կորնթացիներուն գրած առաջին նամակին որ 12-րդ գլուխին մէջ, ուր Յրդ համարով կ'ըսէ. «**Չկայ մէկը որ Աստուծոյ Հոգիովը խօսի՝ և Յիսուսին «նզովեալ ըլլայ» ըսէ: Եւ ոչ որ կրնայ Յիսուսը «Տէր» կոչել, եթէ ոչ Սուրբ Հոգիով**»: Ուշադրութիւն ըրէք, որ այս համարին մէջ յիշատակուած են Երրորդութեան երեք անձերը՝ **Աստուած**, որ Նոր Կտակարանին մէջ յաճախ նաեւ պարզապէս կը կոչուի «Հայրը», **Տէր Յիսուս**, որուն Նոր Կտակարանը միշտ կու տայ Աստուծոյ վերապահուած «ՏէՐ» յատկանշական տիտղոսը, և **Սուրբ Հոգին**:

Յաջորդ երեք համարները Աստուծոյ մեզի պարգեւած շնորհքներուն աղբիւրը կը նշեն, հետեւեալ բացատրութեամբ.—

«Պարգեւները զանազան են, բայց նոյն **ՀՈԳԻՆ** է [տուողը]:

Նաեւ պաշտօնները զանազան են,

բայց նոյն **ՏէՐՆ** է [զանոնք բաշխողը]:

Նոյնպէս ալ ներգործութիւնները զանազան են,

բայց նոյն **ԱՍՏՈՒԱԾՆ** է որ կը ներգործէ» (Ա. Կր. 12.4-6):

Ուշադրութիւն ըրէք, որ այս երեք զուգահեռ համարներուն մէջ ունինք երեք տարբեր կոչումներ.— «**նոյն Հոգին ... նոյն Տէրը ... նոյն Աստուածը**»: Նախորդ՝ Յրդ համարին լոյսին տակ՝ բնական պիտի ըլլայ ենթադրել որ այս կոչումները կը վերաբերին Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրին, այսինքն Սուրբ Հոգիին, Տէր Յիսուս Քրիստոսի և Հօր Աստուծոյ: Այս պարագային անժխտելիօրէն հաստատուած կ'ըլլայ Երրորդութիւնը՝ երեք անձերու կատարեալ միութեամբ, որովհետեւ երեք անգամ կը շեշտուի՝ «**նոյն... նոյն... նոյն**», ինչ որ զօրեղապէս կը նշէ՝ թէ երեք տարբեր անձեր են ա-

նոնք, բայց երեք տարբեր Աստուածներ չեն, այլ ՄԷԿ ԵՒ ՆՈՅՆ ԱՍՏՈՒԱԾԸ:

Պահ մը ենթադրենք, սակայն, թէ յիշեալ 4—6 համարներուն մէջ՝ երեք կոչումներն ալ կը վերաբերին Ա. Հոգիին (այդ մասին կրնայ խորհիլ տալ նաեւ խօսքին շարունակութիւնը). ի՞նչ կ'ըլլայ այդ պարագային: Եթէ ընդունինք որ «Հոգի», «Տէր» և «Աստուած» կոչումները նոյն և մէկ անձին կը վերաբերին, անհերքելիօրէն յայտարարուած կ'ըլլայ՝ թէ Սուրբ Հոգին թէ՛ ՏէՐ է և թէ՛ ԱՍՏՈՒԱԾ: Իսկ եթէ Սուրբ Հոգին կը յայտարարուի ՏէՐ և ԱՍՏՈՒԱԾ, կրկին անհնար կ'ըլլայ ուրանալ Սուրբ Երրորդութիւնը, քանի արդէն մեզի յայտնուած կ'ըլլայ թէ Հօր Աստուծոյ հետ գործող Սուրբ Հոգին ո՛չ միայն կատարեալ անձնատրութիւն մըն է, այլ նաեւ Տէր է և Աստուած, ճիշդ ինչպէս Տէր և Աստուած է նաեւ Որդին, և ուրեմն՝ երեք անձեր ունինք, որոնք ՏէՐ և ԱՍՏՈՒԱԾ են, թեպէտ տարբեր Տէրեր և Աստուածներ չեն, այլ «նոյն», այսինքն՝ ՄԷԿ ԵՒ ՆՈՅՆ ՏէՐԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸ:

Հիմա պարզ չէ՞, թէ ինչո՞ւ այս կարեւորագոյն վկայութեան վրայէն կը սահին կ'անցնին Եհովայի Վկաներ: Որովհետեւ իրենց համար տհաճ պիտի ըլլայ երկու բացատրութիւններէն մէկը կամ միւսը ընդունիլ, քանի երկուքն ալ մի և նոյն եզրակացութեան կ'առաջնորդեն, որմէ փախուստի ելք չի մնար:

3.— Գանք երրորդ վկայութեան: Երբ ա՛լ եկած էր ժամանակը, որ Քրիստոս երկրի վրայ մարմնաւոր իր առաքելութիւնը վատահեր իր ընտրած և պատրաստած առաքելական գունդին և աշակերտներուն, Յիսուս Գալիլեայի մէկ լերան վրայ հանդիպեցաւ տասներմէկ առաքեալներուն, և անոնք տուաւ իր վերջին ու կարեւորագոյն յանձնարարութիւնը, ըսելով. «Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկնքի ու երկրի մէջ: [Ինչպէս Հայրը զիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ]: Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք: ՄԿՐՏԵՅԷՔ ԶԱՆՈՆՔ՝ ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ: Սորվեցուցէք անոնց որ պահեն այն ամէն բաները՝ որ ես ձեզի պատուիրեցի. և ահա ես ամէն օր ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը» (Մտթ. 28.18.20):

Այս խօսքին մէջ Երրորդութեան յիշատակութեան բանաձեւը, Քրիստոսի բերնէն դուրս եկած և քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն կողմէ անորականացած, բան մը կ'ըսէ՞ մեզի, թէ «պարզապէս երեք անձեր իրարու ետեւէ յիշել» մըն է՝ աննպատակ ձեւով:

Ինչպէս Բ.Կր. 13.13-ի օրհնութեան բանաձեւին պարագային ըսինք, այստեղ եւս, և առաւել իրաւամբ, երեք անձերուն միասին յիշատակութեանը ինքնին վկայութիւն մըն է, այո՛, թէ յիշուած երեք անձերը հաւասար են՝ բնութեամբ, իշխանութեամբ եւ յաւիտենականութեամբ: Որովհետեւ, Քրիստոս կ'ըսէ թէ ԵՐԵՔ ԱՆՁԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՈՎ է որ պէտք է իրեն անոնք: Հարցուցէ՛ք, ինչո՞ւ և ի՞նչպէս: Եթէ Հօր Աստուծոյ կողքին միայն Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անունը յիշուած ըլլար՝ մենք թերեւս կրնայինք իրաւունք տալ Եհովայի Վկաներուն, ըսելու՝ թէ չկա՛յ Երրորդութիւն, թէ պէտեւ պիտի չկարենայինք հասկնալ ու բացատրել, թէ ինչո՞ւ Հօրը անունին կողքին՝ պէտք էր Որդիին անունով ալ մկրտուելին Աստուծոյ հաւատացողները: Չէ՞ որ Որդին պարզապէս Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը ցոյցները: Չէ՞ որ Որդին պարզապէս Աստուծոյ ճշմարիտ ճանաչողութիւնը ցոյցները մը եղած պիտի ըլլար, Մովսէս մարգարէի մը պէս, մինչդէռ մկրտ-

տությւնը սրբութեան և կեանքի նորոգութեամբ փրկութեան խորհրդանիշ մըն էր, խորհուրդ մը՝ որ միայն Աստուծոյ անունով կրնար կատարուիլ: Իսկ եթէ Որդին Աստուած չէր, այսինքն իր խօսքով մարդիկը սրբողը, նորոգողը և անոնց փրկութիւն պարգետողը չէր (հմմտ. Եփ. 5.26-27), այլ պարզապէս մկրտութեամբ պարգետուած փրկութեան միջնորդ մըն էր, ինչո՞ւ պէտք է իր անունն ալ յիշուէր Հօրը անունին հետ:

Իսկ ատելի գայթակղելին՝ Սուրբ Հոգիին յիշատակութիւնն է, եթէ չընդունինք Երրորդութիւնը: Եթէ Ս. Հոգին անձ մը չէ, ըստ Եհովայի Վկաներուն, այլ պարզապէս ելեկտրական հոսանքին նմանող «գործօն ոյժ մը», ի՞նչպէս կ'ըլլայ որ անոր անունով կը մկրտուին քրիստոնէաներ. ծիծաղելի չէ՞ արդեօք ատիկա: Պահու մը համար պատկերացնենք այնպէս, թէ Քրիստոս Աստուծոյ հիմնարկած նոր և մեծ ընկերութեան ընդհանուր վերականգուն կամ պատասխանատուն է պարզապէս, և Աստուծոյ «Սուրբ Հոգին» իրօք այսօրուան հզօր համակարգիչներուն նմանող մեքենական ոյժ մըն է, որ իրեն տրուած հրահանգները կը փոխանցէ կամ կը գործադրէ՝ ուզուած նպատակով և ուղղութեամբ: Արդեօք պիտի կարենա՞նք պատկերացնել գործատէր Աստուած մը, որ ըսէ. «Գացէ՛ք իմ հետեւորդներս մկրտեցէք իմ, իմ վերականգուիս և իմ համակարգիչիս անունով»: Այսպիսի անհեթեթ բացատրութիւնները անարգանք են Աստուծոյ անունին և Սուրբ Հոգիին դէմ գործուած հայհոյութիւն են, այն աններելի մեղքը՝ որուն թողութիւն չկայ, կ'ըսէր Քրիստոս, ո՛չ այս աշխարհի մէջ և ոչ ալ յաիտենականին (Մտ. 12.31-32):

Ըսինք արդէն, թէ վերեւ յիշուած երեք վկայութիւնները միակները չեն: Այսպէս, օրինակ, Պետրոս առաքեալ իր առաջին նամակը կը բանայ, ըսելով. «Հայրն Աստուած ձեզ իր կանխագիտութեամբը ընտրեց, որպէսզի **[Սուրբ] Հոգիով սրբուած՝ հնազանդիք Յիսուս Քրիստոսի, որուն արիւնովը մաքրուեցաք**» (Ա.Պտ. 1.1-2): Այս կարգի բազմաթիւ ուրիշ վկայութիւններ ալ կարելի էր բերել: Բայց առայժմ կը բաւականանանք ըսելով՝ թէ Ս. Երրորդութիւնը իր երբեակ անձնատրութիւններով միատեղ յայտնուեցաւ Յիսուսի մկրտութեան ատեն (Մտ. 3-16-17: Մր. 1.10-11: Ղկ. 3.21-22: Յհ. 1.32-34), իբրեւ բացայայտ յայտնութիւն մը Աստուծոյ ճշմարիտ էութեան կամ ինչութեան մասին: Քրիստոս և Նոր Կտակարանի հեղինակները բազմաթիւ կերպերով կ'ակնարկեն երեք անձերուն և անոնց աստուածութեան: Որդիին և Սուրբ Հոգիին մասին առանձին-առանձին խօսած ատեն պիտի տեսնենք բազմաթիւ հաստատումներ, որոնք Աստուածաշունչը սերտողին սքանչելիօրէն և անառարկելիօրէն ցոյց կու տան Երրորդութեան ներկայութիւնը Ս. Գրքին մէջ:

ԱՆՔՆՆԵԼԻՆ ԵՒ ԱՆՀԱՍԿՆԱԼԻՆ

Այսպէս Աստուծոյ խօսքը կը փակէ ելքերը բոլոր անոնց առջեւ, որոնք ճշմարտութենէն փախչելու ճամբայ մը կը խորհին. ամէն կողմէ կը պաշարէ զանոնք, որպէսզի իրենք ալ Սաղմոսագրին բառերովը խոստովանին և ըսեն,

«Բնաւ խօսք չկա՛յ իմ լեզուիս վրայ.
 ահա, ո՛վ Տէր, դուն ամէնը գիտես:
 Իմ ետեւէս ու առաջեւէս զիս պաշարեցիր,
 և քու ձեռքդ իմ վրաս դրիր:
 ԱՅՍ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԻՆԾԻ ԽԻՍՏ ԶԱՐԾԱՆԱԼԻ Է,
 ԲԱՐՁՐ Է ՈՒ ՉԵՄ ԿՐՆԱՐ ՀԱՍԿՆԱԼ ԶԱՆԻԿԱ:
 Ո՛ր երթամ քու Հոգիէդ,
 և քու երեսէդ ո՛ր փախչիմ:
 Եթէ երկինք ելլեմ՝ դուն հոգն ես.
 եթէ դժոխքը անկողինս ընեմ՝ դարձեալ դուն հոգն ես.
 եթէ արշալոյսին թեւերը առնեմ
 և ծովուն վերջին ծայրերը բնակիմ,
 հո՛ն ալ քու ձեռքդ ինձի պիտի առաջնորդէ
 և քու աջդ զիս պիտի բռնէ» (Սղ. 138.4-10):

Մենք տեսանք Աստուածաշունչին անհերքելի վկայութիւնները, բայց աստով հանդերձ կրկին կը խոստովանինք, որ Սուրբ Երրորդութեան խորհուրդը դիւրին չէ ըմբռնելը, ալ ո՛ր մնաց քննելը կամ բացատրելը: «Այս գիտութիւնը ինձի խիստ զարմանալի է, բարձր է ու չեմ կրնար հասկնալ զանիկա» ըսած է Սաղմոսագիրը, և զարմանալի չէ, հետեւաբար, տեսնել՝ թէ մեծագոյն աստուածաբաններն իսկ խոնարհաբար կը խոստովանին թէ անքննելի և անհասանելի խորհուրդ մըն է անիկա մարդկային միտքին համար:

Բայց, հարցնե՛նք դարձեալ, միայն Երրորդութի՛ւնն է դժուար բացատրելին: Դիւրի՛ն է զԱստուած պատկերացնել, բացատրել կամ հասկնալ: Ինչպէս զԱստուած իր շատ մը կողմերով ու յատկանիշներով («աստորոգելիներով») ճանչնալով հանդերձ կը խոստովանինք որ չենք կըրնար ատելին թափանցել, որովհետեւ մեր հողեղէն սահմանափակ միտքերէն անսահմանօրէն ատելի գերազանց և վեր է անոր հոգեղէն էութիւնը, այնպէս նաեւ չենք կրնար մեր սահմանափակ միտքերով պատկերացնել ու հասկնալ թէ ի՛նչպէս Ս. Երրորդութիւնը երեք անձ է բայց մէկ բնութիւն, մէկ կամք, մէկ Աստուած և մէկ իշխանութիւն: Բայց ատիկա երբեք պատճառ չէ որ մենք չփորձենք հասկնալ կամ բացատրել այն ինչ որ Աստուած թէկուզ և մասնակիօրէն յայտնած է մեզի: Եկեղեցւոյ սրբազան Հայրերը կը խոստովանին դժուարութիւնը, բայց չեն հրաժարիր դաւանելէ այն ինչ որ Աստուածաշունչը կ'ուսուցանէ, և իրենց կողմէ տրուած օրինակներով կը փորձեն մեր հասողութեան ատելի մօտեցնել անմերձեցալիկ և պատմել անճառելին: Այսպէս, օրինակ, Ս. Գրիգոր Լուսաւորիչը իր Յաճախապատում ժառերուն մէջ հետեւեալ օրինակը կու տայ.—

«Ինչպէս [երբ] արեւ, լոյս և ջերմութիւն կ'ըսենք՝ միակ արեգակին համար [է որ կ'ըսենք], և ո՛չ տարբեր-տարբեր բաներու, և ինչպէս աղբիւրը, ջուրը և գետը մէկ բնութիւն կը հասկցուին, և մարդուն մէջ ալ նոյնպէս [մէկ բնութիւն կը հասկցուին] միտքը, խօսքը և հոգին, այնպէս ալ հոս պէտք է հասկնալ Հօրը, Որդիին և Սուրբ Հոգիին մէկ բնութիւնն ու [մէկ] աստուածութիւնը: Որովհետեւ չկա՛յ արեգակ առանց լոյսի և ջերմութեան, ո՛չ ալ աղբիւր՝ առանց ջրի և բղխումի, ո՛չ ալ միտք՝ առանց խօսքի և հոգիի: Այդպէս ալ Հայրը չկա՛ր առանց Որդիին և Սուրբ Հոգիին» (Ծառ Ա, Վեներտիկ 1954, էջ 11: Թարգմանութիւնը մերն է):

Աստուած չ'ըսպասեր որ մենք հասկանաք իր էութեան անքննելի խոր-
հորդը, բայց ինքզինք իր երեք անձերով յայտնեց պարզագոյն ձեով, որ-
պէսզի մենք մեր սրտերուն մէջ հաւատանք և մեր հաւատքի դաւանութեան
մէջ զինք խոստովանինք, այդ ճանաչողութեամբ փրկուելու և յաւիտեա-
կան կեանքը ունենալու համար (Յհ. 17.3):

